

## ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ. ՀԱՂՈՐԴՈՂ ԵՎ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԼԵԶՎԱՏԱՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՀՄ ԼԵԶՎՈՒՄ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ   
*Երևանի պետական համալսարան*

Ժամանակի ընթացքում զանգվածային հաղորդակցման միջոցների լեզուն վերափոխվում է՝ արձագանքելով տեղեկատվության տարածման արագությանը, ազդեցության միջոցների բազմազանությանը և լսարանի պահանջների փոփոխությանը: Այդ փոփոխությունների պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ստանում լեզվական կաղապարների (շտամպների, խոսքային բանաձևերի, կրկնվող կառուցվածքային միավորների) գործածությունը, որոնք ապահովում են թե՛ հաղորդակցության հստակությունն ու մատչելիությունը, թե՛ ազդեցիկության բարձր մակարդակը:

ԶՀՄ լեզուն՝ որպես հանրային խոսույթի կարևոր տարր, միաժամանակ պարունակում է ինչպես հաղորդող (ինֆորմատիվ), այնպես էլ ներգործող (ապելյատիվ, պերսուազիվ) տարրեր: Դրանց համատեղ գործածությունը դրսևորվում է հատկապես կաղապարների մեջ՝ ձևավորելով արժեքային, գնահատողական և գաղափարական հարանշանակությամբ (կոնոտացիաներով) հագեցած միավորներ, որոնք ակտիվորեն օգտագործվում են լրագրողական տարբեր ժանրերում:

Մեր այս հոդվածում ներկայացվում են կաղապարների՝ որպես կառուցվածքային և գաղափարական միջոցների գործառական հնարավորությունները հայաստանյան զանգվածային հաղորդակցության տարբեր միջոցներում, դրանց հաղորդակցական նշանակությունը տարբեր ժանրերում, վերլուծվում և նկարագրվում են հաղորդող և ներգործող բաղադրիչների համատեղ գործածությունն ու փոխազդեցությունը՝ որպես ԶՀՄ լեզվի առանցքային հատկանիշ:

**Բանալի բառեր** – լեզվական կաղապար, ընդհանուր լեզվակաղապար, մեղիալեզվակաղապար, խոսքային բանաձևեր, արտալեզվական գործոններ, լեզվական-մտային գործոններ, հաղորդող և ներգործող լեզվատարրեր, խորհրդային շրջան, հետխորհրդային շրջան, գործառման ոլորտ, գործառույթներ

**Յուրի Ավետիսյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ

**Юрий Аветисян** – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка ЕГУ

**Yuri Avetisyan** – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ [yuriavetisyan@ysu.am](mailto:yuriavetisyan@ysu.am) <https://orcid.org/0009-0004-7475-8161>



This work is licensed under a Creative Commons Attribution-Non-Commercial 4.0 International License.

Ստացվել է՝ 30.09.2025

Գրախոսվել է՝ 23.10.2025

Հաստատվել է՝ 06.11.2025

© The Author(s) 2025

**Լեզվական կադապար:** Հարցի առաջին ուսումնասիրողներից Գ. Վինոկուրը առաջ քաշեց այն տեսակետը, որ կադապարայնությունը լրագրային լեզվի անհրաժեշտ և անբաժանելի հատկանիշն է<sup>1</sup>: Հետագա ուսումնասիրողները (Վ. Կոստոմարով, Գ. Սոլգանիկ, Դ. Ռոզենտայլ, մեզանում՝ Ռ. Շալունց և ուրիշներ) հանգեցին այն եզրակացության, որ «ստանդարտը» և տեղին գործածված «շաբլոնը» ոչ միայն լրագրային լեզվի, այլև առհասարակ ՁԼՄ լեզվին բնորոշ գիծ է<sup>2</sup>: Եղան նաև հակառակ տեսակետի կողմնակիցներ, որոնց կարծիքով շտամպը և ստանդարտը որակվեցին **կադապարաբանություններ**, որոնք իբրև թե գորշություն ու միապաղաղություն են հաղորդում լեզվին: Չէր խրախուսվում դրանց գործածությունը՝ «Չի կարելի հանդուրժել շաբլոնն ու տրաֆարետը մամուլում» կարգախոսով: Այս տեսակետի կողմնակիցները կա՛մ որպես ելակետ և համեմատության եզր ընդունում էին գեղարվեստական տեքստը՝ ռուս դասականների գեղարվեստական ոճը (Ա. Գորբունով և այլք), կա՛մ իրենց գնահատականներում հստակ չէին տարբերակում անհրաժեշտ կադապարը և անհարկի շտամպը (Ա. Սկվորցով, Հ. Բադդասարյան, Մ. Ավագյան և այլք)<sup>3</sup>: Սակայն այս տեսակետը ունեցավ շատ մասնակի դրսևորումներ: Դրանց հաղորդակցական արդյունավետության վերաբերյալ վեճերը արդի մասնագիտական գրականության մեջ կարծես մարել են, և առաջ է մղվում այն կարծիքը, որ լեզվական կադապարը ՁԼՄ լեզվական կառուցվածքի անբաժանելի բաղադրիչ է:

**Շտամպ, ստանդարտ, շաբլոն, կլիշե, տրաֆարետ, ստերեոտիպ** և նման այլ տերմինները հայ մեդիալեզվաբանության մեջ հաճախ քննարկվել են առանց իմաստային էական զանազանություն արձանագրելու: Չեն զատվել իրարից մի կողմից՝ սովորական կայուն բառակապակցությունները, մյուս կողմից՝ լրագրային ստանդարտը և դրա անհաջող կիրառությունները, մերժելի կլիշեներ կամ շտամպը:

<sup>1</sup> Տե՛ս **Винокур А.**, Культура языка. М., 1929, էջ 213:

<sup>2</sup> Տե՛ս **Շալունց Ռ.**, Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Եր., 1987, էջ 24-33, 114-115:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 17-19, 114-115:

\* Ժամանակակից հետազոտողի կարծիքով՝ ճշգրիտ լինելու համար նպատակահարմար է **ՁԼՄ** տերմինի (զանգվածային լրատվության միջոցներ) կապակցական **լրատվություն** բաղադրիչը փոխարինել **հաղորդակցություն** տերմինով (**ՁԼՄ**—զանգվածային հաղորդակցության միջոցներ): Հարցադրումը պայմանավորված է զանգվածային լրատվամիջոցների բովանդակային ու կառուցվածքային, ինչպես նաև գործառության և այլ կարգի մի շարք փոփոխություններով (լսարանի ակտիվ ներգրավվածություն, սոցիալական ներգործություն, փոխադարձ մեկնաբանություններ են), որոնք արտացոլված են զանգվածային հաղորդակցության միջոցներում (տե՛ս **Клушина Н.** Стиль массовой коммуникации, М., 2010; **Колесникова О.** Язык и стиль современных средств массовой коммуникации, Киров, 2020): **ՁԼՄ** հասկացությունը ներառում է տպագիր մամուլը, լրատվության էլեկտրոնային միջոցները (ռադիոհեռուստատեսություն, էլեկտրոնային մամուլ, տեղեկատվական գործակալություններ), սոցցանցային հաղորդակցության միջոցները (Telegram, Facebook, Twitter, Instagram ևն):

Երբ փորձում ենք ճշգրտել գործածվող տերմինների իմաստային հատկանիշներն ու ծագումնաբանական հիմքերը, պարզվում է, որ դրանք կա՛մ այլևայլ իմաստներով (հիմնականում փոխաբերական) հոմանշային միավորներ են, կա՛մ իմաստային սերտ առնչություն ունեցող հասկացություններ: Այսպես: **Շաբլոն**. փոխառություն է ռուսերենից՝ ֆրանսերեն-գերմաներեն միջնորդությամբ՝ գերմ.՝ **Schablone** (<ֆր.՝ **e'chantillon**-ից, նշանակում է *փորձարկում, նմուշ*): Ըստ հայերեն բացատրական բառարանների՝ «1. Ձևով՝ չափսով նն միատեսակ արտադրանքի նմուշ՝ ձևանմուշ: 2. Գործիք...: 3. փխբ. Սովորական դարձած կարգ՝ օրինակ նն, որին կուրորեն հետևում են» [ԱՀԲԲ]: Այլ բացատրությամբ՝ «Մտքերն արտահայտելու շատ սովորական՝ միօրինակ ձև՝ արտահայտություն» [ԺՀԼԲԲ], «2. Տափակ, սովորական, անարժեք: Շաբլոն՝ մտքեր՝ խօսքեր» [ՀԲԲ]: **Տոսամպ** – գերմ.՝ **Stampfe** բառից (<**stampo** – իտալերեն՝ *կնիք, դրոշմ*): Ըստ հայերեն բացատրական բառարանների՝ «1. Գործիք...: 2. Հիմնարկի անունը կրող կնիք...: 3. փխբ. Պատրաստի օրինակ, տրաֆարետ, որին կուրորեն հետևում՝ նմանվում են» [ԺՀԼԲԲ]: **Ստանդարտ** – անգլ.՝ **standart** – կայուն լինել: «1. Որևէ բանի նմուշ, օրինակ...: 3. փխբ. Շարունակ կրկնվող միօրինակություն, անփոփոխ՝ մաշված ու միօրինակ բան, շաբլոն, տրաֆարետ: Դե դրանք ստանդարտ խոսքեր են...» [ԱՀԲԲ]: **Կլիշե** – ֆր.՝ **cliché** (փխբ. անընդհատ կրկնված՝ շաբլոնային դարձած արտահայտություն): «2. փխբ. Անընդհատ կրկնված՝ շաբլոնային դարձած բան: Սրանք կլիշե դարձած խոսքեր են...» [ԱՀԲԲ]: **Կադապար** – հունարեն՝ «ոտքի փայտեայ կադապար» բառից, կրկնակ ձևը՝ **գադափար** [ՀԱԲ]: Ըստ բառարանային տվյալների՝ ունի իննից տասը իմաստ՝ «1. Նմուշ, որից հանում են ձև՝ մի այլ նյութով ձուլելու կամ վերարտադրելու համար...» նն: Ութերորդ՝ փոխաբերական նշանակությամբ գործածվում է որպես գիտաբան՝ «Ընդունված սովորական կամ կանոնական դարձած օրինակ՝ ձև՝ նմուշ, որին կուրորեն հետևում են»<sup>4</sup>:

Ակնհայտ է, որ այս բոլոր տերմինները լեզվաբանական նշանակությամբ, որը հիմնված է դրանց առավելապես երկրորդական-փոխաբերական իմաստների վրա, արտահայտում են հասկացական նույն բովանդակությունը: Հետևաբար տերմինի ընտրությունը ըստ էության ունի պայմանական նշանակություն, քանի որ դրանք ազատ բաշխման հարաբերության մեջ գտնվող տարբերակներ են:

Մեզանում հարցին ամենից հանգամանորեն անդրադարձել է լեզվաբան Ռ. Շալունցը: Ցավոք, ուսումնասիրողը հստակ ու միանշանակ չի սահմանում այդ տերմինների նշանակությունը և չի ճշգրտում դրանց գործածության

<sup>4</sup> Որպես տերմին՝ գործածվում է նաև կառուցվածքային լեզվաբանության մեջ, բայց ավելի նեղ՝ գուտ լեզվաբանական նշանակությամբ՝ «ԿԱՂԱՊԱՆ/модель, լեզվի կառուցվածքային միավոր տիպ, իբրև բաղադրիչ տարրերի հետևողական շարք դրանց կանոնավորված փոխկապակցությամբ (փոխհարաբերությամբ)» [Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987]:

շրջանակները: Բայց լեզվաբանի բնութագրումներից կարելի է ենթադրել, որ նա ի վերջո հակված է երևույթը անվանող տերմիններից առանձնացնելու երկուսը՝ **ստանդարտ**-ը և **շտամպ**-ը, առաջինը՝ որպես լրագրային լեզվին բնորոշ և դրական նշանակությամբ հասկացություն, երկրորդը՝ դրա՝ ըստ գործածության հանձնարարելի կամ ոչ հանձնարարելի տարբերակ: Յու. Դավթյանը նախընտրությունը տվել է **լրագրային շտամպ** և **խոսքային կաղապարներ** տերմինային կապակցություններին: Բայց լեզվաբանը, դրանք համարելով «լեզվական պատրաստի միավորներ, որոնք ակտիվորեն մասնակցում են մտքերի ձևավորմանը», այնուամենայնիվ չի կատարում դասակարգում և բավարարվում է «կաղապարների» չորս խումբ օրինակներ թվարկելով<sup>5</sup>:

Մենք նախապատվությունը տվել ենք **կաղապար** տերմինին, նախ՝ որ իր հասկացական նշանակությամբ («ընդունված՝ սովորական կամ կանոնական դարձած օրինակ՝ ձև՝ նմուշ, որին .... հետևում են») ավելի մոտ է քննարկվող լեզվական իրողությանը, այսինքն՝ տերմինի բովանդակությունը համապատասխանում է հասկացությանը, և երկրորդ՝ իբրև հնագույն փոխառություն՝ այն ավելի է ձուլված հայերենի բառային կազմին և իր հնչյունական նկարագրով ավելի ներդաշնակ է հայերենի արտասանական համակարգին, քան մյուս փոխառյալ և օտարաբան տերմինները: Տերմինային նշանակությամբ գործածելիս զանց ենք առնում բառի բացատրության մեջ ակնարկվող *«կուրորեն» հետևելու, ընդօրինակելու, նմանվելու* բացասական երանգ ունեցող իմաստները, քանի որ այս ոլորտում դրանց գործածությունը օբյեկտիվորեն չի բնութագրվում նման հատկանիշներով (այդ մասին՝ ստորև):

Վ. Կոստոմարովը լրագրային լեզվում գործադրվող «լեզվական ստանդարտները» քննելիս հանգում է եզրակացության, ըստ որի՝ լրագրային լեզվում գործադրվող «ստանդարտը» իր մեջ առնում է երկու կարգի, այսպես կոչված, ենթաստանդարտներ՝ **«ընդհանուր ստանդարտներ»** և **«լրագրային ստանդարտներ»**: Առաջինները, ըստ այդ տեսության, վերաբերում են նաև լեզվի գործառնական մյուս ոլորտներին (իրավագիտություն, տնտեսագիտություն ևն) և ըստ էության այդ ոլորտներից են մուտք գործում լրատվամիջոցներ, երկրորդները լրագրային լեզվին հատուկ ստանդարտներ են, գործառնական են այս ոլորտում: Այդ տեսակները փոխներթափանցումների մեջ են, մասնավորապես՝ առաջինները աղբյուր են երկրորդների ձևավորման համար<sup>6</sup>:

Ելնելով մեր ուսումնասիրության արդյունքներից՝ փոքր-ինչ զարգացնելով այս մոտեցումը՝ հայերեն ՁՀՄ լեզվում գործառնական կայուն բառակապակցությունների և խոսքային պատրաստի բանաձևերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ «սխեման»:

<sup>5</sup> Տե՛ս Դավթյան Յու., Արևելահայ մամուլի լեզուն հետխորհրդային շրջանում, Եր., 2006, էջ 212-213:

<sup>6</sup> Տե՛ս Костомаров В. Г., Русский язык на газетной полосе, М., 1971, էջ 10:

Քննարկվող լեզվական կառույցներն ու միավորները առաջարկում ենք անվանել **լեզվական կաղապարներ**, որոնք իրենց հերթին ունեն երկու կարգի դրսևորումներ՝ **ընդհանուր լեզվակաղապարներ (համալեզվական կաղապարներ)** և **մեղիալեզվակաղապարներ: Առաջինները** կայուն արտահայտություններ են, որոնց բաղադրիչները հաճախակի համատեղ գործածվելու հետևանքով ձեռք են բերել սերտ հարաբերակցություն: Օգտագործվում են առօրյա խոսքում կամ, այսպես կոչված, ոլորտային տեքստերում: Հաճախ ձևավորվում են դարձվածային համակարգում կամ մշակութային հենքի վրա: Զանգվածային հաղորդակցության միջոցներում չունեն կոնկրետ գործառույթ: **Երկրորդները** ՁՀՄ-ին հատուկ կաղապարներ են, ձևավորվում են հաղորդակցական անհրաժեշտություններից ելնելով, կատարում են առավելապես լրատվական գործառույթ, ինչը նվազեցնում է նրանց ներազդման դերը:

**Համալեզվական կաղապարները** առավելապես բնորոշ են վերլուծական նյութերին և ունեն թեմատիկ մեծ բազմազանություն: Կարող են վերաբերել՝ ♦ տնտեսությանը (տնտեսական մրցակցություն, տնտեսական ակտիվության աճ, ներդրումների համար բարենպաստ պայմաններ, տնտեսությունը շարունակում է կայուն աճ գրանցել), ♦ հասարակական-քաղաքական կյանքին (քաղաքական ճգնաժամ, էթնիկ գոտում), ♦ միջազգային դիվանագիտական հարաբերություններին (միջուկային նոր սպառնալիք, դիտորդական առաքելություն, Միսսիլի խմբի համանախագահներ, Քիվեսթյան համաձայնագիր), ♦ ռազմաքաղաքական իրավիճակին (ռազմական հատուկ գործողություններ, սահմանազատման և սահմանագծման հանձնաժողով, հայելային հետքաշում, ռազմաքաղաքական վերնախավ, ռազմական նոր էսկալացիա), ♦ կուսակցական գործունեությանը (ՀՀԴ գրասենյակ, ՔՊ խմբակցություն, ներկուսակցական խնդիրներ), ♦ կրթական համակարգին (ակադեմիական քաղաք, կրթական նոր չափորոշիչներ), ♦ արդարադատությանը և առհասարակ իրավական ոլորտին (սահմանադրական նորմ, մարդու իրավունքներ, դատական համակարգ), ♦ տեղեկատվական տեխնոլոգիաներին (սոցիալական ցանց, համակարգչային կայք, էլեկտրոնային հասցե) են: Սրանց գործածությունը, կարելի է ասել, հավասարապես բնորոշ է նաև ոլորտային լեզուներին՝ իրավաբանական, տնտեսագիտական, դիվանագիտական, ակադեմիական գրագրություն, քաղաքագիտական գրականություն, կրթական-մշակութային փաստաթղթեր, օրենքներ ու չափորոշիչներ են:

Այս նյութերի հեղինակը կարող է լինել նաև տվյալ ոլորտի մասնագետը՝ իրավաբանը, տնտեսագետը, բժիշկը, արվեստագետը են: Այսինքն՝ այդպիսի կայուն կապակցությունները բուն ՁՀՄ լեզվի բառային կազմի բաղադրիչ չեն: Բնորոշում են այդ լեզուն այնքանով, որքանով հրապարակվում կամ քննարկվում են հաղորդակցության միջոցներում: Պայմանավորված թեմատիկայով կամ նյութի ժանրային հատկանիշներով՝ գործածվում են նաև հաղորդակցության միջոցների լեզվում: Այստեղ դրանք առավելապես կոչված են ոճավո-

րելու համապատասխան մասնագիտական տեքստը: Իրականացնում են շատ որոշակի գործառնություններ. պաշտոնական ոճում նպաստում են խոսքի կառուցիկ լինելուն, հստակություն և ամբողջականություն են հաղորդում պաշտոնական տեքստին: Նաև որոշ վստահություն են ներշնչում տեքստի ավանդականության, անփոփոխելիության հիմքով: Ապահովում են նաև խոսքի պաշտոնականությունն ու հանդիսավորությունը: Գիտական խոսքում նպաստում են տեղեկատվության արագ հաղորդմանը և ընկալմանը: Օգնում են հեղինակին համառոտ և սեղմ բնութագրելու երևույթը:

**Մեդիալեզվակաղապարը** բառակապակցական կայուն միավոր է՝ դարձյալ բաղադրիչների իմաստային-կառուցվածքային սերտաձուլմամբ: Ընդունված է դրանք առավելապես վերագրել ՁՀՄ լեզվին: Ի տարբերություն նախորդի՝ գործածվում է գերազանցապես տեղեկատվական տեքստերում և բացառապես լրագրողների կողմից: Ունի հաղորդող ներգործության ավելի մեծ ուժ, քան նկարագրական խոսքը: Տեքստը կառուցվում է սեղմ, հակիրճ. տեղեկույթը ձևակերպվում է արագ, փոխանցվում է արագ, արագ ընկալվում է լսարանի կողմից: Ե՛վ հեղինակը, և՛ օգտատերը էապես խնայում են էներգիա ու ժամանակ: Նաև հնարավորություն են ունենում նույն կաղապարներով արձագանքելու և հաղորդակցվելու իրար հետ: Պատահական չէ, որ մեդիակաղապարը ավելի հաճախ գործածվում է տեղեկատվական ժանրերում: Մա ի վերջո լեզվական կաղապար է, որի մեջ հեղինակը տեղադրում է իր բուն ասելիքը: Առանց պատրաստի լեզվական կաղապարների՝ անհնար է արագ և գրագետ պատրաստել տեղեկատվություն և, ընդհանրապես, հաղորդատվական նյութեր:

Լեզվակաղապարների հաճախակի գործածությունը պայմանավորված է արտալեզվական և լեզվական մի շարք գործոններով:

**Արտալեզվական գործոններ.** հասարակական կյանքի աննախադեպ զարգացումը և փոփոխությունները ստիպում են արագ և կարճ արձագանքելու իրադարձություններին: Խոսքային բանաձևերով կաղապարայնացվում է տեղեկատվության ուժեղ հոսքը:

**Լեզվական-մտային գործոններ.** լրագրողը քիչ ջանքեր է գործադրում ձևակերպումների համար, օգտվելով արդեն պատրաստի խոսքային կառույցներից՝ տնտեսում է մտքի էներգիան: Կաղապարը հաղորդում է նաև որոշակի արտահայտչականություն. խոսքը դառնում է ավելի դյուրընկալ, մատչելի և սահուն:

Շատ հիմնավոր է ռուս հետազոտողի բնորոշումը ՁՀՄ լեզվում կաղապարների ձևավորման պատճառների և դրանց գործառնական նշանակության վերաբերյալ. «Լրագրությունը՝ որպես արտադրություն, հոսքագիծ է: Լրագրությունը՝ որպես ծառայությունների ոլորտ, նույնպես տեքստերի հոսքագծային (հոսքային) փոխանցում է լսարանին: Մի խոսքով, զանգվածային արտադրություն՝ զանգվածային պահանջարկի համար: Եթե ամեն անգամ ինչ-

որ օրիգինալ բան ստեղծվի, ապա առաջին հերթին՝ ժամանակը բավարար չի լինի (մյուսներն առաջ կանցնեն, թերթի համարը կգնա տպարան, եթերի ժամանակը բաց կթողնվի), երկրորդ՝ հանդիսատեսը չի արձագանքի նորությամբ: Տեղեկատվության հոսքի մեջ լսարանը պետք է լավ կոդմոնորոշվի, այլ ոչ թե լուծի բառախաղեր և ջանքեր գործադրի՝ հասնելու համար ավանգարդորեն կառուցված տեքստի իմաստին: – .... Այս նպատակի գործնական իրացումը (պրագմատիկան) առաջացնում է լրագրողական նյութերի ձևերի տնտեսում և ստանդարտացում»<sup>7</sup>:

Կադապարները լեզվական կայուն միավորներ են: Բայց դա հարաբերական է. նոր ժամանակները ծնում են նոր կադապարներ:

Փոփոխության են ենթարկվում ինչպես համալեզվակադապարները, այնպես էլ մեդիալեզվակադապարները: Առաջինների փոփոխությունը գերազանցապես պայմանավորված է արտալեզվական գործոններով՝ հասարակական-քաղաքական կյանքի փոփոխություններ, տնտեսության շրջադարձային զարգացումներ, ռազմաքաղաքական իրավիճակ, միջազգային հարաբերություններ են: Համեմատության համար բերենք խորհրդային և հետխորհրդային ժամանակներին բնորոշ գործառնական ընդամենը մեկ-երկու ոլորտի վերաբերող լեզվական կադապարներ: Այսպես:

#### **Ռազմական կյանք.**

**խորհրդային շրջան՝** *միջուկային թևավոր հրթիռ, ռազմաօդային կցորդ, զինվորական թղթակից, միլիտարիզմի ուժեր, հրթիռամիջուկային զենք, իմպերիալիզմի ագրեսիա, մարտական անխախտ դաշինք, սովետական փառապանծ զինված ուժեր, իմպերիալիզմի սպասավորներ, ՄՍՀՄ զինված ուժեր, խաղաղության դեկլարացիա:*

**հետխորհրդային շրջան՝** *սահմանագծման հանձնաժողով, ԱԹՄ-ների հարձակման ենթարկվել, օդատիեզերական ուժեր, զորքերի հայելային հետքաշում, նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագիր, ռուսական խաղաղապահ ուժեր, ռազմական հատուկ գործողություններ, անվտանգության գոտի, խաղաղության օրակարգ, խաղաղության խաչմերուկ, ԵՄ դիտորդական առաքելություն, հայ-ադրբեջանական սահմանի տարբեր հատվածներ:*

#### **Աշխատանքային գործունեություն, տնտեսական հարաբերություններ.**

**խորհրդային շրջան՝** *աշխատանքային հերթափոխ, եղբայրական ժողովուրդների անխախտ բարեկամություն, հարվածային ճակատ, սոցիալիստական մրցույթ, փոխանցիկ դրոշմ հաղթողներին, պլանների կատարում և գերակատարում, հարվածային հերթափոխ, հնգամյակի հարվածային տարի, աշխատանքի վետերան, փոխանցիկ դրոշմ, կոլտնտեսային շուկա:*

**հետխորհրդային շրջան՝** *նոր բիզնես ծրագիր, անժամկետ վարկեր, եկամտահարկի վերադարձ, վարկային կենսագրություն, պաշտոնական Երևանը*

<sup>7</sup> Третьяков В., Как стать знаменитим журналистом, М., 2004, с. 263.

վստահեցնում է, անհատույց օգտագործում, Կենտրոնական բանկ, տնտեսավարող ուժեր, BRICS-ի անդամ երկրներ, ավելացված արժեքի հարկ:

**Հասարակական-քաղաքական կյանք՝ գաղափարախոսական կաղապարներ.**

**խորհրդային շրջան՝** խաղաղ համագործակցություն, աշխատավոր ժողովրդի հաղթանակ, սոցիալիստական հարաբերություններ, աշխատավոր դասակարգ, ՄՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, Գերագույն խորհուրդ, կենտկոմի քարտուղար, մարքս-լենինյան գաղափարախոսություն, իմպերիալիստական ագրեսիա, սոցիալիստական հայրենիք, խաղաղության և սոցիալիզմի ճամբար, հնգամյակը չորս տարում, փոխանցիկ դրոշ, շրջկոմի նախագահ, սոցիալիստական համակեցության կանոններ:

**հետխորհրդային շրջան՝** քաղաքական կուսակցություններ, ազդեցության գործակալներ, ընդդիմության վարքագիծ, ընդդիմադիր ֆրակցիա, արտասահմանյան ֆինանսավորմամբ գործակալներ, բաց հասարակություն, Ազգային ժողով, վարչապետի աշխատակազմ, համայնքի ղեկավար, անվտանգության խորհրդի քարտուղար, քաղաքացիական հասարակություն, ԿԳՄՄ նախարար:

Տարբերություններն ակնառու են: Իհարկե, առանձին կաղապարներ անխուսափելիորեն գործածվել են երկու շրջափուլերում էլ: Դրանք ավելի շատ ընդհանրական նշանակությամբ միավորներ են, ինչպես՝ *իրականացնել վերահսկողություն, սերտ համագործակցություն, հասարակական հարաբերություններ, սպառազինությունների մրցավազք, ամենօրյա աշխատանք տանել, ակտիվորեն մասնակցել, սառը պատերազմ, բարձր արդյունավետություն, միջազգային կյանք, կարճ լուրեր, անվտանգության երաշխիքներ* են: Եվ դա բնական է, քանի որ հասարակական կարգի նույնիսկ արմատական, շրջադարձային փոփոխության դեպքում էլ հանրային կյանքի և մանավանդ արտաքին աշխարհի հետ կապված շատ ու շատ կողմեր ու հարաբերություններ մնում են գրեթե անփոփոխ, հետևապես անփոփոխ են մնում նաև դրանց լեզվական արտահայտության միջոցները:

Կառուցվածքային և բովանդակային զգալի փոփոխություններ են կրել հետխորհրդային շրջանի ՁՀՄ լեզվակաղապարները՝ պայմանավորված մեդիադաշտի գործառական և կառուցվածքային փոփոխություններով: Նախկին լրատվամիջոցների լեզվական կաղապարների («Մեր արտահաստիքային թղթակիցները հաղորդում են», «Մասսայական ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցներ», «Ինչպես հաղորդում է ՏԱՄՍ-ը», «Ինչպես մեզ տեղեկացրին համապատասխան մարմիններից») փոխարեն՝ հետխորհրդային շրջանի մեդիամիջոցները կազմել և շրջանառության մեջ են դրել նոր կաղապարներ («Ըստ մեր ունեցած հավաստի տեղեկությունների», «Ըստ մեր աղբյուրների», «Մեր աղբյուրները հայտնում են», «Ըստ որոշ լուրերի», «Հավաստի աղբյուրներից հայտնի է դարձել», «Ինչպես մեզ հայտնեց ԱԳՆ խոսնակը»):

Էլեկտրոնային և սոցցանցային միջոցներում սովորական են ավելի խոսակցական կառույցներն ու կաղապարները՝ «Ըստ օրում կախված (հավաստի) լուրերի», «Ինքնությունը չբացահայտած աղբյուրը հայտնում է», «Այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է....», «Նյութն ամբողջությամբ կարդացեք բնօրինակ կայքում», «Ավելի վաղ հայտնել էինք, որ....», «Ինչպես ավելի վաղ գրել էինք....», «Տեսանյութը և լուսանկարները՝ ստորև», «Տեսանյութն ու լուսանկարները՝ ըստ ...-ի», «Տարածելը խրախուսվում է», «Մանրամասները՝ քիչ անց»։ Դրանք հաճախ ամբողջական նախադասություններ են, մի տեսակ տեղեկատվական լեզվակաղապարներ, որ մեկ-երկու բառի փոփոխությամբ կարելի է տեղադրել նույնաբնույթ նյութերում, ինչպես՝ «Առաջին նախագահի մամուլի խոսնակի փոխանցմամբ՝ շուրջ երկու ժամ տևած զրույցի ընթացքում հանգամանորեն քննարկվել են հայ-իրանական բարեկամության ամրապնդման, տնտեսական և մշակութային հարաբերությունների խորացման, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության և հաղորդակցության ճանապարհների անխափան գործունեության ապահովման ու զարգացման խնդիրները» (news.am, 16.01.2024). սա կաղապար է, որ աննշան փոփոխություններով կարելի է «մշտապես» գործածել։

Լեզվակաղապարը դարձել է մեդիախոսույթի անբաժանելի մաս։ Այստեղ կաղապարը նույնքան մեծ անհրաժեշտություն է, որքան արտահայտչամիջոցը։

Կայուն բառակապակցությունների և լեզվական կաղապարների միջև մի տեսակ միջանկյալ դիրք են գրավում պատրաստի **խոսքային բանաձևերը**։ Դրանք նույնպես մեծ չափով հեշտացնում են հաղորդակցման գործընթացը։ Այլ հեղինակներ դրանց անվանում են **շտամպ**։ Կոչում են նաև **խոսքային կաղապարներ**։ Բառեր և բառակապակցություններ են, որոնք, ի տարբերություն նախորդների, պակաս զգայուն են հասարակական-քաղաքական և այլ կարգի փոփոխությունների հանդեպ։ Կատարում են սոսկ կապակցական դեր. ունեն ատավելապես տեքստակազմական նշանակություն. կապում են խոսքային միավորներ՝ նախադասություն, պարբերություն։ Հատուկ են գործառական բոլոր ոճերին՝ բացառությամբ գեղարվեստականի, որը հասկանալի պատճառներով չի ընդունում կաղապարներ։ Այսպես՝

**գիտական ոճ՝** *հիմնավորված տեսակետ է, պետք է նկատել նաև, պակաս կարևոր չէ նաև հետևյալ փաստարկը, չենք բացառում, ուշագրավն այն է, գիտական գրականության մեջ ընդունված է համարել, ստացված արդյունքները վկայում են, մեզ ավելի համոզիչ է թվում, եղած փաստերին կարելի է ավելացնել, մեր դիտարկումներով, ըստ մեր հետազոտության արդյունքների;*

**խոսակցական ոճ՝** *իմ խորին համոզմամբ, չմոռանալ նշել, ուշադրություն դարձրեք, տպավորություն ունեմ, հավատացած եմ, լսիր քեզ ինչ եմ ասում, չի բացառվում, նայեք ինչ եմ ասում, չեմ կասկածում, պարզ երևում է, ես էն*

կարծիքին եմ, դու լավ գիտես, ասեմ նաև, մի բան էլ ասեմ, ճիշտն ասած, ուշադիր լսիր՝ ինչ եմ ասում:

**պաշտոնական ոճ՝** հարկ ենք համարում հիշեցնել, հիմք ընդունելով, համաձայն հաստատված կարգի, կից ներկայացնում ենք, կողմերը պարտավորվում են, պահանջ է դրվել, իրավունք է տալիս ասելու, տպավորությունն այնպիսին է, հարկ եղած ճշտումները կատարելուց հետո, մեզ հաջողվեց պարզել, համատեղ որոշումներ:

Իհարկե, դրանցում կարելի է առանձնացնել օրինակներ, որոնք առավել հատուկ են ոճերից մեկին կամ մյուսին. հստակ սահման դժվար է գծել, և դրա անհրաժեշտությունն էլ ըստ էության չկա: Ներթափանցումները բնական են: Ժամանակ առ ժամանակ փոխվում է նաև դրանց գործածության հաճախականությունը, որը մի առանձին քննության առարկա է: Պարզապես պետք է արձանագրել, որ խոսքային կաղապարները անփոխարինելի տարրեր են տեքստակազմության մեջ: Առանց դրանց՝ պարզապես չի կարող կառուցվել խոսքը, դա լինի պաշտոնական, գիտական թե՛ հրապարակախոսական: Միայն պետք է հիշել, որ ցանկացած բառ կամ բառակապակցություն, միևնույն համատեքստում հաճախակի կրկնվելով, կարող է վերածվել անհարկի շտամպի:

**Լեզվական կաղապարը մեղիախոսության կարևոր և անփոխարինելի բաղադրիչ է:**

Կաղապարի կամ խոսքային բանաձևի անհարկի գործածությունը կամ կուտակումը էապես թուլացնում է խոսքի ուժը, դարձնում այն միօրինակ ու անհրապույր, ինչպես հետևյալ դեպքերում՝ «Վեցերորդ ~~ասվածին~~ **հարկ է ափեցնել...** Թեև ընդհանուր առմամբ ~~կարելի է ասել~~, որ մեր երկրում կայացած ամեն ...» (1in.am; 05.07.2012), «~~Նկատի ունենալով այն հանգամանքը~~, որ համառորեն շրջանառության մեջ է պահվում ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ...» (facebook; 22.12.2020), «Այս պահին հիմնականում մեքենաները անցնում են Լարսի անցակետով, ~~պետք է նշել~~, որ խնդիրները առաջացել են ուժեղացված վերահսկողության կամ հսկողության ....» (tert.am; 12.06.2023), «~~Բնականաբար~~ ասում են, պանթյունքիզմը պոզով-պոչով չի լինում: Միջանցքը առևտրի համար չէ, *միջանցքը (>դա)* Թուրքիայի հնարավորությունն է իրականացնելու...» (azg.am; 09.03.2024): «Մենք, ~~կարելի է ասել~~, հասել ենք մեր նպատակներին...» (1in.am; 28.10.2024), «~~Ենթադրյալ~~ **Որ** Բոքերտ Նալբանդյանն ունի երեք անչափահաս երեխա, իսկ աղբրեջանական գերության ընթացքում ծեծի հետեւանքով ստացել է կողոսկրերի կոտրվածք» (Yerkir.am; 29.12. 2021), «~~Եվ եթե մենք նայենք պարոն Փաշինյանի քաղաքականությանը, ապա կտեսնենք~~, որ նա բավականին հետևողականորեն հայկական քաղաքականության մեջ *նա հետևողականորեն* փորձում է Ռուսաստանին փոխարինել ԵՄ-ով» (7or.am; 13.07.2025):

**Հաղորդող և ներգործող լեզվատարրերի համատեղ գործածություն:** Լեզվական կադապարները, ինչպես տեսանք, մեղիատեքստում կատարում են առավելապես տեղեկատվական գործառույթ, այնպես, ինչպես լրատվական բառապաշարը: Դրանք մասնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել հաղորդող լեզվատարրեր: Մեղիալեզուն առատորեն օգտվում է այդ լեզվատարրերի տեղեկատվական հնարավորություններից: Սակայն այդքանով չի սահմանափակվում: Դրանք հաճախ զուգակցվում են գնահատողական-արտահայտչական միջոցների՝ ներգործող տարրերի հետ: ԶՀՄ լեզուն յուրահատուկ է ոչ միայն մյուս բոլոր ոճերին բնորոշ կադապարների առավել կամ պակաս գործադրությամբ, այլև նրանով, որ հաջողությամբ համատեղում է կադապարը և արտահայտչամիջոցը:

**Հաղորդող և ներգործող տարրերի համատեղ գործածությունը ԶՀՄ լեզվի առանցքային հատկանիշներից է:**

Եթե ավանդական դասակարգումներում դրանք դիտվում են որպես գործառական առանձին շերտեր, ապա մեղիատեքստում այդ տարրերը համակցվում են՝ ստեղծելով միաժամանակ և՛ տեղեկատվություն փոխանցող, և՛ ընթերցողին կամ դիտողին ուղղորդող հաղորդագրություն: Հաղորդող լեզվատարրերը ապահովում են փաստերի, իրադարձությունների ներկայացում, ներգործողները ուղղված են ընթերցողի զգայարաններին, վերաբերմունքին, մտածողությանը, կամքի վրա ազդելուն: Դրանք հաճախ համադրվում են՝ ստեղծելով քողարկված քարոզչական, կողմնորոշող կամ հուզական ազդեցությամբ բովանդակություն: Այդպիսին կարող է լինել, օրինակ,

• **տեղեկատվության մեկնաբանված մատուցումը՝** «ՔՊ-ից հեռացած Հովիկ Աղազարյանն ու Հակոբ Ասլանյանը երեկ հրապարակեցին իրենց նորաստեղծ ՄԱՍ կուսակցության վարչության որոշումը, համաձայն որի՝ իրենց վարչապետի թեկնածուն «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ Էդմոն Մարությանն է (=> **հաղորդող տարր**): ՄԱՍԿ-ը վա-բանկ է գնում» (=> **ներգործող տարր**) (hraparak.am; 17.05.2025): «Երեք ամիս անընդմեջ բնակարանի գները նվազում են (=> **հաղորդող տարր**): Մինչև ո՞ր կիսանի անշարժ գույքի գնանկումը» (=> **ներգործող տարր**) (168.am; 18.05.2025);

• **տեքստում հեղինակային և ուղիղ խոսքի կառուցումը՝** «ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն շաբաթ օրը հեռախոսազրույց է ունեցել իր ռուսաստանցի գործընկեր Սերգեյ Լավրովի հետ՝ վերջին բանակցությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով (=> **հաղորդող տարր**): «Մենք խոսել ենք ամենատարբեր բաների մասին, — CBS News-ին տված հարցազրույցում ասել է Ռուբիոն: — Ես ուզում էի իմանալ նրա կարծիքը, թե ինչպես են անցել երեկվա բանակցությունները: Դրանք ժամանակի զուր վատնում չեն եղել» (=> **ներգործող տարր**) (news.am; 18.05.2025);

• **տեղեկատվական կադապարի մեջ ներգործող տարրի ներմուծումը՝** «Պակիստանը մայիսի 10-ի Հնդկաստանի հարվածներից հետո *բառացիորեն*

աղաչում էր (=> **ներգործող տարր**. ընդգծումը՝ Յու. Ա.) ԱՄՆ-ին միջամտել» (news.am; 17.05.2025): «Թեհրանի հայ դատի հանձնախմբի նախագահ Իսակ Յունանեսյանն արձագանքել է Աննա Հակոբյանի՝ իրանահայերին ուղղված վիրավորանքին՝ նշելով (=> **հաղորդող տարր**). «Հայաստանի առաջին չղջիկը վերադառնում է գործարանային դիրքեր»» (=> **ներգործող տարր**)» (yerkir.am; 21.05.2025):

Լեզվաբանական տեսանկյունից՝ հաղորդագրությունը պարզապես «փոխանցում է խոսք», փաստացի այն կրում է ներգործող տարրեր՝ հաստատելով կամ շեշտադրելով կարծիք: Երկրորդ բաժինը կարող է չեզոք թվալ, սակայն իրականում ուղղորդում է գնահատողական ընկալման:

Ժամանակակից ՁՀՄ-ն գրեթե չունի «մաքուր տեղեկատվական» դաշտ. բոլոր հաղորդումները իրականում ազդելու փորձեր են, և լեզուն դառնում է այդ ազդեցության գործիքը. համատեղ գործածությունը հանգեցնում է «քողարկված ներգործման» գործիքակազմի: Դա արդյունավետ է, երբ նպատակ ունի տեղեկացնելու և զգուշացնելու, բայց կարող է նաև մանիպուլյատիվ բնույթ կրել՝ ընթերցողին տրամադրելով ոչ թե փաստեր, այլ կանխավ մտածված մեկնաբանություններ: Այսօր մեդիագրագիտությունը նաև նշանակում է կարողանալ տարբերել տեղեկատվական շերտերը, զանազանել փաստերը գնահատականներից, և ըմբռնել, թե երբ է լեզուն ծառայում հաղորդման և երբ՝ ազդելու նպատակին:

Հաղորդող և ներգործող լեզվատարրերի համատեղ գործածությունը ոճական կարևոր հնարք է նաև վերլուծական հոդվածներում: Հաղորդող լեզվատարրերը այս դեպքում ցույց են տալիս նյութի հիմնական առանցքը, ներառում են փաստացի տվյալներ: Հաղորդող լեզվական միջոցներ են չեզոք բառապաշարը, տերմինաբանությունը, թվերը, ուղեկցող բառերը, պարզ, տեղեկանքային նախադասությունները, պարբերության կարճ հատվածները, խոսքային բանաձևերը ևն: Ներգործողները գնահատողական ասություններ են՝ հոետորական հարց, հուզական բառապաշար, բազմաբարդ նախադասություններ, ուշագրավ պատկերներ, մակագրություններ, արտահայտչական միջոցներ: Վերլուծական նյութերում լավագույն լուծումը այդ երկու տարբերակների համամասնությունը պահպանելն է: Այսպես՝ «Ազգ» պարբերաթերթի խմբագիր Հ. Ավետիքյանը իր «Պոպուլիստի ու բռնակալի վերջը» խմբագրական հոդվածում քննարկելով Էրդոհան բռնակալի քաղաքական դիմանկարը և, առհասարակ, թուրքական քաղաքական իրականությունը՝ մեր հայերիս անհեռանկարը կանգնեցում է այդ բիրտ իրականության դեմ, շատ հմտորեն կարողացել է համատեղել կադապարը և արտահայտչամիջոցը. խոսքային բանաձևերի, լեզվակադապարի և արտահայտչամիջոցի ներդաշնակ համադրությունը նրա տեղեկատվական/վերլուծական խոսքը դարձրել է նաև բավարար չափով մատչելի ու գեղարվեստական: Ահա մի հատված այդ ոչ ծավալուն հոդվածից. «Եվ այս հողի վրա անակնկալ չպետք է լիներ այն, ինչը տեղի

ունեցավ ու շարունակում է տեղի ունենալ Թուրքիայի գրեթե ողջ տարածքում՝ Ստամբուլից մինչև Անկարա, Իզմիր և անգամ՝ հեռավոր Էլազիկ: Բավեց, որ ընդամենը մեկ քաղաքական գործիչ, հանձին 15 միլիոնանոց քաղաքի քաղաքապետ Էքրեմ Իմամօղլուի, չգսպի իր հավակնությունը առաջիկա 2028 թ. կայանալիք նախագահական ընտրություններում թեկնածու ներկայանալու, այսինքն՝ ասպարեզ կարդա գործող նախագահի դեմ, ապա ամբաստանությունը, կոռուպցիոն բնույթի մեղադրանքով կարվեց այնքան արագ, որքան կարվում է... Հայաստանում: Մարդը ձերբակալվեց մարտի 19-ի առավոտյան, իր տանը, պիժամայով, որից հետո դժվար չէր կարը շարունակել նորանոր կարվածքներով՝ էլ կոռուպցիոն սխեմաներ, էլ «սահաբեկչական» կազմակերպությունների ֆինանսավորում, և այլն: ..... Թուրքիայի նման՝ ռազմիշխանությամբ ղեկավարվող հարևան ունենալու դեպքում ի՞նչ ենք անելու մենք: Դժբախտաբար՝ շատ քիչ բան: Բայց գոնե կարող ենք, գեթ առժամանակ, հրաժարվել ծեծեքուն դիվանագիտությունից, «Խաղաղության պայմանագիր», «Մարգարայի կամուրջ» և նման դատարկաբանություններից, և գլխավորը՝ գուրգուրալ ու զինել մեր բանակը և, միաժամանակ, պահպանել Գյումրիի ռազմաբազայի վրա փողփողացող դրոշը» (azg.am; 28.03.2025):

Ներգործող տարրը կարող է լինել նաև ներակայված՝ թաքնված. հակադրվող եզրերից մեկը ինչ-որ երևույթի կամ իրողության ներակա արտահայտությունն է, որը ակնարկվում է: Օրինակ՝ «**Ձվածեղից** բարձր կա գերիների բարձրացման հարց» (hraparak.am; 18.03.25). օրեր առաջ ՀՀ վարչապետը հանդես էր եկել իր պատրաստած **ձվածեղի** «գովազդով»: Մեղիամիջոցները ամենատարբեր ձևերով անդրադարձան երևույթին: Դրանցից մեկն էլ այս ներակայված անդրադարձումն էր: Մեկ այլ օրինակ. ՀՀ վարչապետ Փաշինյանը հուլիսի վերջերին Ալյոսյ մեկնեց՝ մասնակցելու բնության և շրջակա միջավայրի պաշտպանությանը նվիրված միջազգային համաժողովին: Բայց վարչապետը մեկնել էր ոչ թե մենակ, այլ կնոջ և կրտսեր դստեր հետ, մի բան, ինչը հաճախ է անում միջպետական հանդիպումների կամ արտասահմանյան այցերի ժամանակ, և ինչը, սակայն, բոլորովին էլ միանշանակ չի ընդունվում հայ հանրության կողմից: Եվ ահա հեռուստալրագրողը այդ այցի վերաբերյալ տեղեկատվությունը կազմում է հետևյալ կերպ. «Ալյոսյի ազգային երգեր լսելուց հետո վարչապետը կամ **ընտանիքը** Մանժերոկ հանգստավայր է մեկնել, որտեղ Փաշինյանը հանդիպել է Ռուսաստանի վարչապետի հետ» (5-րդ ալիք; 24.07.2025). ընդգծված բառի գործածությամբ լրագրողը արտահայտում է իր (ասել է թե՛ հանրության որոշակի շերտերի) «անթաքույց» ժխտողական վերաբերմունքը երևույթի նկատմամբ. թվում է, թե սովորական, տեղեկանքային նշանակությամբ է գործածված բառը, բայց այն հասցեատիրոջը փոխանցում է «իմպլիցիտ գնահատական»: Այսպիսի լեզվական կառուցվածքներն իրենց բնույթով ստեղծում են ենթատեքստ, որտեղ լրագրողը միաժամանակ տեղեկացնում է ու ազդում է՝ առանց բացահայտ դիրքորոշման:

**Հաղորդող և ներգործող լեզվատարրերի համակարգված և հաջող համադրությունը մեղիալեզվի մշակվածության նշան է:**

**Ամփոփում:** Զանգվածային հաղորդակցության միջոցներին բնորոշ է լեզվական կաղապարների ձևավորումը: ՉՀՄ լեզվում դրանց գործածությունը պայմանավորված է հաղորդակցումը լավարկելու (օպտիմալացնելու) և ազդեցությունը խորացնելու անհրաժեշտությամբ: Դրանք մասնակցում են հաղորդող և ներգործող տարրերի միաժամանակյա գործարկմանը: Այդ տարրերի համատեղումը ոչ միայն ապահովում է տեղեկության փոխանցումը, այլև միտված է հստակ վերաբերմունք և ազդեցություն ձևավորելուն: Լեզվական կաղապարը հիմնականում հաղորդակցական բաղադրիչ է, իսկ ներգործող տարրը՝ ներազդման:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հաղորդող և ներգործող տարրերի համատեղումը ՉՀՄ լեզվի համակարգային առանձնահատկությունն է, որն առավել նկատելի է այն ժանրերում, որոնցում տեղեկատվությունը ուղեկցվում է մեկնաբանությամբ, գնահատմամբ կամ հորդորով: Կաղապարը՝ որպես լեզվական միավոր, այս համատեքստում դառնում է ոչ միայն ձևային բաղադրիչ, այլև ազդեցության կրող՝ ապահովելով մեղիահաղորդակցության կառուցվածքային և իմաստային ամբողջականությունը:

**ЮРИЙ АВЕТИСЯН – Языковой шаблон. Совместное функционирование передающих и воздействующих языковых элементов в языке СМК.** – Для средств массовой коммуникации характерно формирование языковых шаблонов. Их использование в языке СМК обусловлено необходимостью оптимизации общения и усиления воздействия. Они участвуют в одновременном задействовании передающих и воздействующих элементов. Сочетание этих элементов не только обеспечивает передачу информации, но и направлено на формирование четкого отношения и влияние. Языковой шаблон является в основном коммуникативным компонентом, а воздействующий элемент — компонентом убеждения.

Анализ показывает, что совмещение передающих и воздействующих элементов является системной особенностью языка СМК, наиболее заметной в тех жанрах, где информация сопровождается комментарием, оценкой или призывом. Шаблон, как языковая единица, в этом контексте становится не только формальным компонентом, но и носителем воздействия, обеспечивая структурную и смысловую целостность медиакommunikации.

**Ключевые слова:** языковой шаблон, общий языковой шаблон, медийно-языковой шаблон, речевые формулы, экстралингвистические факторы, когнитивно-языковые факторы, передающие и воздействующие языковые элементы, советский период, постсоветский период, сфера функционирования, функции

**YURI AVETISYAN – Language Template: the Joint Functioning of Transmitting and Influencing Language Elements in Mass Media Language.**– The formation of language templates is characteristic of mass communication means. Their usage in mass media language is conditioned by the need to optimize communication and intensify influence. They participate in the simultaneous activation of transmitting and influencing elements. The combination of these elements not only ensures the transfer of information but also aims to shape clear attitudes and exert influence. The linguistic template is primarily a communicative component, while the

influencing element is one of persuasion. The analysis shows that the combination of transmitting and influencing elements is a systemic feature of mass media language, most noticeable in genres where information is accompanied by commentary, evaluation, or exhortation. The template, as a linguistic unit, in this context becomes not only a formal component but also a carrier of influence, ensuring the structural and semantic integrity of media communication.

**Key words:** *language template, general language template, media-language template, speech formulas, extralinguistic factors, linguistic-cognitive factors, transmitting and influencing language elements, Soviet period, post-Soviet period, domain of use, functions*

#### References

- Davtyan, Yu. 2006. Arevelahay mamuli lezun hetkhorhrdayin shrjannum, Er. (in Armenian).  
 Kostomarov, V. G. 1971. Russkiy yazyk na gazetnoy polose, M. (in Russian).  
 Vinokur, A. 1929. Kultura jazyka, M. (in Russian).  
 Shalunts, R. 1987. Mamuli yev hraparakashut'yan lezun, Er. (in Armenian).  
 Petrosyan, H. 1987. Hayerenagitakan bararan, Er. (in Armenian).  
 Tretyakov, V. 2004. Kak stat' znamenitim zhurnalistom, M. (in Russian).